ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Հանրային առողջապահության, կառավարման, առողջապահության կազմակերպման ամբիոն,

«ՏաՀույս գիտակրթական կենտրոն» ՍՊԸ

«Բիզնես տնտեսագիտություն»

Կրեդիտավորված դասընթաց

2022թ. մայիսի 26-ից մինչև 2022թ. հունիսի 4-ը Առողջապահության ազգային ինստիտուտը «ՏաՀույս» գիտակրթական կենտրոնի հետ համատեղ կազմակերպում է «Բիզնես տնտեսագիտություն» թեմայով կրեդիտավորված հնգօրյա դասընթաց:

Դասընթացի նպատակն է՝ մասնակիցների մոտ զարգացնել տնտեսագիտության հիմնարար սկզբունքների գործնական կիրառման հմտությունները՝ ի ցույց դնելով, թե ինչպես են գնագոյացման, մրցակցության, պահանջարկի և առաջարկի, շուկաների վերաբերյալ տնտեսագիտական մոտեցումները երկարաժամկետ և կայուն առաջընթաց ապահովում բիզնեսի համար:

Դասընթացը հատուկ է ընկերությունների և մասնավորապես բուժհաստատությունների ղեկավարների համար:

Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են բուժհաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների պահանջարկի, առաջարկի, շուկաների և մրցակցության խնդիրները: Մասնակիցները կսովորեն և կներկայացնեն տնտեսագիտական մոտեցումները և սկզբունքները, որոնք օգտագործվում են բիզնեսների կառավարման մեջ:

Դասընթացի ընթացքում մասնակիցները կվերապատրաստվեն հետևյալ թեմաներով՝

Պահանջարկի հիմունքներ

- Պահանջարկի գնահատման և ավելացման ստրատեգիան
- Առաջարկ և արժեքներ
- Շուկաները, մրցակցություն և տարանջատում
- Բիզնես ցիկլ
- Դրամավարկային և հարկային քաղաքականություն
- Միջազային առևտուր և կապիտալի հոսքեր
- Արտարժութային փոխանակման կուրսեր

Դասընթացի ավարտին մասնակիցները կտիրապետեն

- Միկրոէկոնոմիկայի և մակրոէկոնոմիկայի տարրերին
- Ֆինանսական վերլուծությունների և նեդրումների կառավարման տարրերի անհրաժեշտ կոնցեպտներին

Դասավանդման և ուսուցման մեթոդներ

- Տեսական գիտելիքների ներկայացում և ծանոթացում տերմինների ու սահմանումների հետ
- Խնդիրների ներկայացում և լուծում
- Խմբային աշխատանքների իրականացում, արդյունքների ներկայացում և քննարկումների կազմակերպում
- Անհատական աշխատանքների իրականացում և ներկայացում լսարանին քննարկման համար

Մանրամասներ

- Տևողություն՝ 5 օր, 2022թ. մայիսի 26,27,28 և հունիսի 3,4
- Դասերի օրերը՝ հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ՝ 12:00-17:00
- Մասնակիցների քանակը՝ մինչև 25
- Դասավանդման լեզուն՝ հայերեն
- Վայրը՝ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության Ազգային Ինստիտուտ
- Արժեքը՝ 50.000 ՀՀ դրամ

Թիրախային լսարան

- Առողջապահական հաստատությունների ղեկավարներ և տնօրեններ
- Ավագ բուժաշխատողներ
- Առողջապահական ոլորտի աշխատակիցներ
- Տնտեսագետներ

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- Անձնագիր (պատճենը)
- Դիպլոմ (պատճենը)

Ընդունելության գործընթաց

Դիմումների ընդունում՝ 2022թ. մայիսի 17-ից մինչև հունիսի 4-ը

Հարցերի դեպքում դիմել ԱԱԻ ուսումնական բաժին

Հեռ. +374 77 19-99-82, +374 11 30-00-88